ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, ք.Երևան, Վ. Սարգսյան 5, Հեռ: (00374 10) 511-771

№ԴԴ-1 Ա-591

«31» հունվարի 2020թ.

Ա/Ձ Եղիսաբեթ Ալմազյանին
(հասցե՝ ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ,
Վ. Պետրոսյան 1/3)

Հարգելի տիկին Ալմազյան,

Ի պատասխան Ձեր 13.01.2019թ. թիվ 01/01/20 և 30.01.2020թ. թիվ 02/01/20 գրությունների (այսուհետ՝ Գրություն)՝ տեղեկացվում է, որ դրանցում ներկայացված փաստարկներն ու եզրահանգումները հիմնված են ենթադրությունների վրա, չեն համապատասխանում իրականությանը և չեն բխում Դատական դեպարտամենտի (այսուհետ նաև՝ Գնորդ) և «Եղիսաբեթ Ալմազյան» Ա/Ձ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 30.10.2019թ. կնքված թիվ ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/24-5 պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) ստանձնած պարտավորությունների բովանդակությունից:

Այսպես, Պայմանագրի առարկան սահմանող 1.1-ին կետի համաձայն՝ ***Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:*** Միաժամանակ, հարկ է նշել, որ Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանվել է, որ ենթակա են մատակարարման ընդհանուր քանակով՝ **թվով 20 դյուրակիր համակարգիչներ:**

Պայմանագրի 2.4.1-ին կետը սահմանում է, որ ***Վաճառողը պարտավոր է՝ Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:***

Պայմանագրի 5.1-րդ կետի համաձայն՝ ***Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:***

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ ***Վաճառողը Գնորդին է փրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1),*** *իսկ*

էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր կվալիֆիկացիային (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

Պայմանագրի վերը նշված պայմաններից հետևում է, որ մատակարարված ապրանքի ընդունման և դրա դիմաց Գնորդի կողմից վճարումներ կատարելու հիմք է հանդիսանում Պայմանագրով սահմանված **կարգով, ծավալներով, ժամկետներում,** հասցեով և Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր - գնման **ժամանակացույցով նախատեսված ապրանքների** մատակարարումը:

Գրության ուսումնասիրությունից, ինչպես նաև Պայմանագրի վերը նշված դրույթներից հետևում է, որ Ձեր կողմից 2019 թվականի դեկտեմբերի 6-ին և 13-ին մատակարարված ապրանքների մասով խախտվել են ինչպես Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով նախատեսված քանակով՝ 20 հատ ապրանքներ մատակարարելու, այնպես էլ Պայմանագրի 5.1-րդ կետով սահմանված ապրանքի հանձնման և ընդունման կարգի պահանջները: Մասնավորապես, Ձեր կողմից դեկտեմբերի 6-ին 1 հատ դյուրակիր համակարգիչը մատակարարվել է առանց Պայմանագրի N 3 և 3.1-րդ հավելվածներով նախատեսված փաստաթղթերի ներկայացման, որպիսի պարագայում, չի կարող խոսք գնալ Պայմանագրի 5.2-րդ կետով սահմանված ժամկետների խախտման մասին, քանի որ հիշյալ կետի համաձայն՝ ***Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին,*** *Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:* Այսինքն, Պայմանագրով սահմանված բոլոր պայմաններին՝ ապրանքի քանակի և որակի մասով, Դատական դեպարտամենտը կարող էր սպառիչ կերպով անդրադառնալ միայն ապրանքի ամբողջական մատակարարումից՝ 2019 թվականի դեկտեմբերի 16-ից հետո, երբ Ձեր կողմից մատակարարվել էր ապրանքի խմբաքանակի վերջին մաս: Հետևաբար, Դատական դեպարտամենտի համար Պայմանագրի 5.2-րդ կետով սահմանված ժամկետը սկսել է հոսել 2019 թվականի դեկտեմբերի 17-ից:

Վերը նշվածի լույսի ներքո դիտարկելով Դատական դեպարտամենտի կողմից տրամադրված բացասական եզրակացության ենթադրյալ առոչինչ լինելու վերաբերյալ Ձեր պնդումը, պետք է փաստել, որ հիշյալ եզրակացությունը տրամադրվել է Պայմանագրի պայմաններին համապատասխան ժամկետներում և չի կարող առոչինչ

հանդիսանալ, քանի որ այն համապատասխանում է ինչպես ՀՀ օրենսդրությամբ, այնպես էլ Պայմանագրով սահմանված պայմաններին: Ավելին, Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքի մատակարարման վերջնաժամկետը 2019 թվականի դեկտեմբերի 6-ին և 13-ին սպառված չի եղել և Վաճառողը կարող էր լրացնել պակաս մատակարարված ապրանքը, որի առկայության պարագայում միայն կարող էր անդրադարձ կատարվել ապրանքի ողջ խմբաքանակի որակին:

Դրանից բացի, հարկ է արձանագրել, որ Դատական դեպարտամենտի 26.12.2019թ. թիվ ԴԴ-1 Ե-11931 գրությամբ Ձեզ առաջարկ է ներկայացվել մինչև 2019 թվականի դեկտեմբերի 30-ը մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանված պահանջներին համապատասխանող ապրանքը և վճարել Պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տուգանքը, ինչի կապակցությամբ Ձեր կողմից որևէ արձագանք չի ստացվել և այդ ուղղությամբ Ձեր կողմից որևէ միջոց չի ձեռնարկվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ձեր կողմից խախտվել են Պայմանագրի 2.4.1-րդ և 2.4.5-րդ կետերով սահմանված պարտավորությունները, և ղեկավարվելով Պայմանագրի 2.1.4-րդ կետի «բ» ենթակետի, 2.1.7-րդ կետի և 2.1.7.1-րդ կետի «ա» ենթակետի պահանջներով՝ տեղեկացվում է, որ Դատական դեպարտամենտը՝

1. հրաժարվում է Ձեր կողմից մատակարարված ապրանքից և դրա համար վճարելուց,
2. միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը,
3. ձեռնարկում է Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից բխող միջոցներ:
4. հիշեցնում է, որ Դուք պատասխանատվություն եք կրում Պայմանագրի 6-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխան:

Դրանից բացի՝ տեղեկացվում է, որ Դուք կարող եք ետ ստանալ մատակարարված ապրանքը ցանկացած աշխատանքային օր՝ դիմելով Դատական դեպարտամենտի համապատասխան ստորաբաժանմանը:

Հարգանքով՝

ԿԱՐԵՆ ՓՈԼԱԴՅԱՆ